

Երևան քաղաքում մարտի 1-ին անցկացված ցույցի ժամանակ սպանված անձանց ընտանիքները պատասխանի կարիք ունեն տաս տարի անց

Հրապարակված: 2018 թվականի մարտի 1-ին

<<Արմենի մահից հետո մենք այգում տնկել ենք ծառ իր համար երկու...նրանք այժմ մեծ են...և մենք մինչև հիմա չենք իմանում, թե ինչ է պատահել Արմենի հետ և ինչու: Ես կցանկանայի, որպեսզի Դատարանը օգներ մեզ պարզաբանելու, թե ում սխալի արդյունքում է Արմենը մահացել:>>

*Վաչագան Փարմանյանի տղան սպանվել է մարտի 1-ին անցկացված ցույցը ցրելու ժամանակ:
Դիակերձման ընթացքում բացահայտվել է, որ իր գլխի մեջ նա ունեցել է զինվորական գազի նռնակից երկու կտոր:*

Այսօր լրանում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում տեղի ունեցած խաղաղ ցույցի տաս տարին, որը անցկացվել էր 2008 թվականի նախագահական ընտրությունների ենթադրյալ կեղծիքների դեմ և որը հասել էր իշխանության կողմից բռնի կերպով մարդկանց ցրելու գազաթնակետին: Տասը մարդ է մահացել կամ ցույցի ժամանակ կամ



2008 թվականի մարտի 01-ի ցույցը Երևանում

դրան հաջորդող օրերին ստացված մարմնական վնասների արդյունքում, ինչպես նաև Հայաստանում հայտարարվել էր արտակարգ դրություն: Ինը հոգու սպանվածվածների ընտանիքների անդամները պնդում են, որ իրենց բարեկամները մահացել են պետական իշխանությունների կողմից չափազանց եւ

անհամաչափ մահացու ուժի կիրառման արդյունքում, որը կառավարության կողմից վիճարկվում է: Մինչ օրս, մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ շատ անպատասխան հարցեր են մնում և ոչ ոք չի ենթարկվել պատասխանատվության տղամարդկանց մահերի համար:

Այսպիսով, ի՞նչ է պատահել այդ օրը: Եվ ինչպիսի՞ ազդեցություն է այն թողել տուժողների ընտանիքների վրա: Սարգիս Քլոյան, Լիլիյա Մինասյան և Ռուզաննա Հարությունյանը պատմում են իրենց պատմությունները:

Սարգիս Քլոյանի տղան` Գոռը մահացել է 2008 թվականի մարտի 02-ին իր մարմնական վերքերից

<< Մեր տղան երիտասարդ և հետաքրքրասեր տղա էր: Այդ պատճառով էր նա մասնակցել 2008 թվականի նախագահական ընտրություններին հաջորդող Ազատության Հրապարակում տեղի ունեցող ցույցերին: Ես իր հետ էի գնում: Ցույցերը խաղաղ էին: Մենք ելույթներ էինք լսում: Գոռն ու ես Ազատության Հրապարակում չէինք, երբ ցուցարարներին ուժով ցրել էին 2008 թվականի մարտի 01-ի առավոտյան: Նույն օրը երեկոյան, 8:30-9 սահմաններում, ես Գոռի հետ էի ցույցի Ֆրանսիական դեսպանատան մոտ: Չինված ոստիկանական զորքերը տեղավորվել էին այդ տարածքում և փորձում էին սադրել ցուցարարներին, մահակները խփելով իրենց վահաններին: Նրանք ձայնային նոնակ պայթեցրեցին: Ցուցարարները շարժվում էին դեպի այնտեղ, որտեղից ձայն էր գալիս: Ընդդիմության ղեկավարները մեզ կոչ արեցին հավաքվել հրապարակում Մյասնիկյան արձանի հարևանությամբ: Ոստիկանության զինված ուժերը մոտեցան մեզ և շրջափակեցին: Ես տեսա և լսեցի լուսածրող գնդակներ: Նրանք մոտ 10 րոպե կրակում էին: Իմ գնահատմամբ, ներքին ուժերը կրակում էին մեր գլխներից մոտ 5 մետր վերև: >>

Լիլիյա Մինասյանի ամուսինը և Գայանե Հովհաննիսյանի հայրը` Հովհաննեսը, ցույցը ցրելու ժամանակ կրակոցից են մահացել

<<Մոտավորապես ժամը 21:00 սահմաններում, ես մեր տան բալկոնում էի և կարող էի տեսնել և լսել լուսածրող գնդակները: Նրանք հրավառության նման էին: Նրանք կարմիր գույնի էին երկնքում և ես կարողանում էի լսել, ինչը իմ կարծիքով գնդացրի կրակոց էր: Ես փորձում էի զանգել Հովհաննեսին, բայց նա չէր պատասխանում հեռախոսազանգերին: Ես բալկոնում կանգնել եմ 5 րոպեից ոչ ավել նախքան Գայանեի հետ տանից դուրս գալս: Ես տեղյակ էի, որ

հիմնական ցույցը Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ էր Մյասնիկյան արձանի հարևանությամբ, բայց Շահումյանի հրապարակում նույնպես շատ մարդիկ կային, այսպիսով մենք սկզբից այնտեղ ենք գնացել Հովհաննեսին փնտրելու համար: Մոտավորապես 10 րոպե Գայանեն և ես կանգնել ենք Շահումյանի հրապարակում արձանի մոտ Հովհաննեսին փնտրելու համար: Մենք ցանկություն չունեինք ցույցին միանալու: Մենք միայն ցանկանում էինք գտնել Հովհաննեսին: Ես չէի ցանկանում նրան կորցնել:

Երբ մենք վերադարձանք տուն և Գայանեն անվտանգության մեջ էր, ես ցանկացա վերադառնալ երեխաների այգու տարածք Հովհաննեսին փնտրելու համար, բայց հարևանից լսեցի, որ մարդիկ լքում էին այդ տարածքը, քանի-որ նրանց ծեծում էին ոստիկանական մահակներով, այսպիսով ես մնացի տանը... Ես հեռուստացույցով լսեցի, որ մի քանի մարդ վիրավորվել էր և սկսեցի զանգահարել հիվանդանոցներով... Ինչքան երկար ես չէի կարողանում որդուս գտնել, այնքան ես մտավախություն ունեի, որ ինչ-որ բան է պատահել իր հետ: Ես Հովհաննեսին սկսեցի փնտրել նաև ձերբակալվածների մեջ: Հովհաննեսն իր վրա չուներ որևէ նույնականացման նշան>>:

Ես շարունակում էի հիվանդանոցներ զանգել երկու օր անընդմեջ...2008 թվականի մարտի 03-ին, ես լսեցի Հովհաննեսի անունը մահացածների ցուցակում:

Գայանեն 17 տարեկան էր, երբ իր հայրը մահացավ: Նա իսկապես կարոտում է նրան:... Նախնական շրջանում, նա չէր կարողանում աշխատանք գտնել, քանի-որ նրան ճանաչում էին որպես մարտի 01-ին սպանված անձանցից մեկի աղջիկը: Երբ նա մահացավ, Գայանեն շատ արդյունավետորեն սկսեց ստանձնել իր հոր դերը և պատասխանատվությունը: Երբ մենք անցնում ենք ճանապարհը, նա իմ ձեռքը բռնում է, որովհետև Հովհաննեսը կրոնը:>>

Ռուզաննա Հարությունյանի որդին` Տիգրանը, ոստիկանության գորակոչիկ, մահացել է մեկ ամիս հետո իր ծննդյան տասնիններորդ տարեկիցին իր մարմնական վնասվածքներից, որը հետաքննությանը չհաջողվեց կապել ցույցերի հետ:

<<Ինձ տարբեր պատմություններ են պատմում, թե ինչ է պատահել գնդակի հետ, որ կրակել է Տիգրանին: Բոլորը շատ շփոթեցնող են: Երբ ես սկզբում գտել եմ Տիգրանին հիվանդանոցում, ինձ տեղեկացրել են, որ նրան կրակել են, բայց չեն կարողանում գտնել գնդակը: Մեկ ուրիշ բժիշկ տեղեկացրել է, որ նրանք չեն կարողացել հանել գնդակը Տիգրանի մարմնից: Խորհրդարանական Հանձնաժողովի ժամանակ ինձ տեղեկացրեցին, որ գնդակը կրակել են կամ

դիպուկահարի կամ գնդացրի միջոցով, բայց նրանք ինձ չեն հստակեցնում, թե կոնկրետ որն է: Ես չեմ իմանում ինչին հավատալ:>>

Տուժողների ընտանիքները 2011 թվականին [Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանում](#) են փնտրել արդարություն: Սույն գործով սպասվում է Դատարանի վճռին: Մարդու իրավունքների քարոզչության եվրոպական կենտրոնն է ներկայացնում նրանց շահերը Եվրոպական Դատարանում: Մենք պնդում ենք, որ իշխանությունները կիրառել են անհամաչափ ուժ ցույցը ցրելու համար, որ ի սկզբանե խաղաղ էր, ինչի հետևանքով իրենց հարազատներից 9 մարդ մահացել է՝ խախտվելով Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 2-րդ հոդվածը (ՄԻԵԿ): Մենք նույնպես պնդում ենք, որ իշխանություններին չի հաջողվել իրականացնել իրենց հարազատների մահվան արդյունավետ հետաքննություն և նրանք պաշտպանության արդյունավետ միջոց չեն ունեցել (ՄԻԵԿ-ի 13-րդ հոդված):

<<Մահացածների ընտանիքի անդամները իրենց հույսը դրել են Եվրոպական Դատարանի վրա, հաստատվելու, թե ինչ է տեղի ունեցել 2008 թվականի մարտի 01-ին և ով է պատասխանատու իրենց տղաների, հայրերի և ամուսինների մահվան համար: Այս գործերը հայ հասարակության համար որպես ամբողջություն էական են; անօրինական ուժի կիրառումը իրավապահ մարմինների կողմից խաղաղարար ցուցարարների նկատմամբ կրկնվող խնդիր է, որ կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի այդ հարցը լուծելու համար: Ավելի մեծ մասշտաբով, այս գործը վերաբերվում է ուղիղ հարձակում խաղաղարար ցուցարարների վրա իշխող վարչակարգի կողմից՝ ցուցարարների դեմ օգտագործելով մահացու ուժ, ովքեր կանգնած էին պաշտպանելու իրենց քաղաքացիական և քաղաքական իրավունքները>>:

Վահե Գրիգորյան, Մարդու իրավունքների քարոզչության եվրոպական կենտրոնի իրավական խորհրդատու և ընտանիքների ներկայացուցիչ